ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«18» «դեկտեմբերի» 2024 թ. № 534-Լ

«ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀՐԱԶԴԱՆԻ ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՏԱՏԵՂԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 25-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N897-Ն որոշման հավելվածի 42-րդ կետով և 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N1072-Ն որոշման հավելվածի 22-րդ կետով, ինչպես նաև հաշվի առնելով շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի հունիսի 4-ի N195-Ա հրամանով ստեղծված աշխատանքային խմբի կողմից ներկայացված ՆՆ/13.6/9034 զեկուցագիրը, շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 9-ի N349-Լ հրամանով ստեղծված աշխատանքային խմբի 2024 թվականի սեպտեմբերի 27-ի նիստի N1 արձանագրության 5-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերը և շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Ա. Մեյմարյանի մոտ 2024 թվականի նոյեմբերի 22-ին կայացած խորհրդակցության արդյունքում կայացված որոշման 2-րդ կետը (N2/1 արձանագրություն).

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառներում 2024 թվականին լրացուցիչ հատատեղերը՝ համաձայն հավելվածի:

2. Շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ս. Մարկոսյանին.

1) սահմանված կարգով ապահովել «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղում հատատեղերի հատկացման, բնափայտի մթերման և իրացման աշխատանքների իրականացումը,

2) խստագույնս պահպանել շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 9-ի N349-Լ հրամանով ստեղծված աշխատանքային խմբի 2024 թվականի սեպտեմբերի 27-ի նիստի N1 արձանագրության 5-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերի որոշումները,

3) հատման նշանակված ծառերի կոճղերը թողնել հնարավորինս հողի մակերեսին մոտ և ծածկել հողով, իսկ հատման մնացորդները (թեփ, ջախ, ճյուղիկներ և այլն) հավաքել և պահպանելով հրդեհային անվտանգության նորմերը՝ տեղում այրել (համաձայն շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Ա. Մեյմարյանի մոտ 2024 թվականի նոյեմբերի 22-ին կայացած խորհրդակցության արդյունքում կայացված որոշման 2-րդ կետի՝ N2/1 արձանագրություն):

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Ա. Մեյմարյանին:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

12/18/2024

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«18» դեկտեմբերի 2024թ.

ք. Երևան

Հավելված
շրջակա միջավայրի նախարարի
2024թ.դեկտեմբերի «18» -ի N534 - Լ հրամանի

Լրացուցիչ հատատեղեր «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի

h/h	«Անտառտնտեսություն» մասնաճյուղերի անվանումը	ընդհանուր ծավալը, խմ	որից շինափայտ,խմ	Այդ թվում ըստ հատման տեսակների					
				խնամքի		սանիտարական		անտառվերականգնման	
				ընդհանուր ծավալը, խմ	որից շինափայտ, խմ	ընդհանուր ծավալը, խմ	որից շինափայտ, խմ	ընդհանուր ծավալը, խմ	որից շինափայտ, խմ
1	«Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղ	***355.11***	0.00	0.00	0.00	***355.11***	0.00	0.00	0.00
ընդամենը		***355.11***	0.00	0.00	0.00	***355.11***	0.00	0.00	0.00